ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«9» հունվարի 2020 թվականի N:3-Ա ք.Գյումրի

ԼԵՅԼԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով «Մեդիա կենտրոն» նախագծի ղեկավարի 2020 թվականի հունվարի 9-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարողի 2020 թվականի հունվարի 9-ի զեկուցագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող, առողջապահության բաժնի պետ Լեյլի Ասլանյանին 2020 թվականի հունվարի 10-ին գործուղել քաղաք Երևան՝ «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ծննդօգնության ծառայության ֆինանսավորման դադարեցման վերաբերյալ քննարկմանը մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2020 թվականի հունվարի 10-ին:
3. Լեյլի Ասլանյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ Լուսինե Մովսիսյանին:

4. Լեյլի Ասլանյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է